

ՀՈՎՈՒԱԿԱՆ ՁԵԿՈՅՑ
ՏԻԹՐՈՅԻ Ս.ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻԶ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
1956

Աղօթքի, գործի եւ յառաջդիմութեան տարի մը եւս բոլորեցինք միասին Ս.Յովհ. Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյ հովանիին ներքեւ: Մեծագոյն Տիթրոյթի հայութեան թիւը կարելի չէ եղած ստուգել. ընդհանուր կարծիքը այն է թէ մեր թիւը կը հասնի 15,000ի եւ թէ մեր Ծուխի շրջանակին մէջ գտնուող հայերու թիւն է մօտաւորապէս 8,000: Ունինք 1250 հասցէ, որոնց կը ղրկուին մեր ծանուցումներն ու թերթիկը: 1956ին մեր տրատու անդամներուն թիւը եղած է 1149 որոնցմէ 233ը նոր անդամներ են, եւ սակայն մեր բոլոր անդամները իրենց յետեալ պարտքերը եթէ վճարած ըլլա- յին մեր անդամներու ընդհանուր թիւը եղած պիտի ըլլար 1364: Եթէ այս թիւերը կը խօսին, անոնք մէկ բան կըսեն. Մեր ժողովուրդը, եւ մասնաւորաբար մեր երիտա- սարդութիւնը կը դիմեն դէպի Հայց. Եկեղեցին ու անկէ կը սպասեն իրենց ազգային, ընտանեկան ու հոգեկան պէտքերուն գոհացումը: Այս թիւերը տակաւին կըսեն թէ շատ գործ կայ ընելիք, հունձքը առատ է բայց մշակները քիչ եւ թէ աճող անդամու- թեան հետ կաճի նաեւ մեր եւ ձեր պատասխանատուութիւնը հանդէպ մեր սիրելի ժողո- վուրդին ու պաշտելի Ս. Եկեղեցիին ու մեր Տիթրոյ Զիսուսի Գրիստոսի:

Իբրեւ Հոգեւոր Հովիւր Ս.Յովհ. Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյս եւ իր բանաւոր հօտին, իբ 1956 տարուան գործունէութեան մէկ ամփոփ տեղեկագիրը կուզեմ ներկայացնել Պատկառելի Ժողովիդ, գիտակցելով որ հովուական բոլոր գործերուս մէջ ալ կարելի էր աւելի լաւը ընել ու չեմ կրցած ընել: Եթէ գործին մեծութիւնը եւ բազմերես- ութիւնը զիս մղած են որմիշտ ճանչնամ ուժերուս եւ կարողութեանս սահմանակալու- թիւնը, միւս կողմէ սակայն անոնք տուած են ինծի հոգեկան տագնապներ: Գիտնալ որ ինչ գործեր կան ընելիք, ինչ ծարաւ հոգիներ կան տուներու եւ հիւանդանոցնե- ռու մէջ, թէ ինչ ընտանեկան ցաւեր կան որոնք հոգեւորականի մը խնամքին պէտք ունին, եւ այս բոլորը գիտնալէն ետք չկարենալ հասնիլ անոնց եւ շատ անգամ միայն մէկ այցելութեամբ գոհանալ, այս բոլորը ցաւեր են անոր որ կուզէ հաւատարիմ մնալ իր ուխտին: Հետեւեալը մէկ պատկերն է մեր գործին 1956ի ընթացքին.

1. Անխափան ամէն Կիրակի ունեցած ենք եկեղեցական պաշտամունք եւ քարոզ: Մեծ Պահքի օրերուն Զորեքշաբթի գիշերները Խաղաղական եւ Հանգստեան Ժամերգութիւն, իսկ նոյն շրջանի Կիրակի օրերուն Արեւազալի Ժամերգութիւն եւ Ս. Պատարագ փակեալ խորանով: 1956 տարուան ընթացքին մատուցած ենք 55 Ս. Պատարագ, միասին հաշուած ըլլալով 2 Խթման, 1 Հայկական Ծնունդի, 1 Աւագ Հինգշաբթիի եւ 1 Վարդանանց Ս. Պատարագները: Տիթրոյթ Գաունսըլ օվ Զըրչըզի հրաւերով եւ հովանաւորութեամբ Վարդանանց Տօնին օրը ունեցանք վրայ քարոզ մը խօսեցանք, որ քանի մը ամիս ետք դարձեալ ձայնարձակուեցաւ իրենց կողմէ գնահատանքի արժանանալով: Անցնող տարուան ընթացքին իրենց այցելութեանց ընթացքին պատարագեցին Հոգ. Տ. Սուքիաս Վրդ. Գալճա- եան եւ Հոգ. Տ. Վազգէն Աբղ. Թաղօեան նայակարա ձուսի եւ Գանատայի շրջանի հովիւր:

Այս առթիւ իմ ամենաշեղբոմ գնահատութիւնս կը յայտնեմ իմ հոգեւոր եղբայրներուս եւ գործակիցներուս. Բըշ. Ա. Սրկ. Լեւոն Զէնեանի որ Կիրակնօրեայ Դպրոցի տեսչութեան առընթեր իբրեւ քարոզիչ իր օժանդակութիւնը բերաւ իր խօսքին ուժն ու հմայքը տալով մեր սրբազան բեմին: Բըշ. Ա. Սրկ. Յարութիւն Եթիզեանի որ թէ իբրեւ ղպրապետ եւ թէ իբրեւ սարկաւազ իր ծառայութեամբ բերած է շուք ու վեհութիւն մեր սրբազան արարողութեանց, եւ քանիցս մեր բացակայութեան կատարած է թաղման ~~պարտքերը~~ կարգ: Ս. Սեդանին սպասարկողներէն մասնաւորաբար Բըշ. Ա. Սրկ. Արա Հայկին, ինչպէս նաեւ Դանիէլ Շահան, Խաչիկ Սէմիզեան եւ Յակոբ ձանոյեան սարկաւազներուն իրենց հաւատարիմ եւ կանոնաւոր սպասարկութեանց համար: Ամենայն վստահութեամբ կըրնանք ք յայտարարել որ սարկաւազներու տեսակէտէն, Ամերիկայի մեր բոլոր եկեղեցիներու հետ բաղդատմամբ մեր եկեղեցին ամէնէն բախտաւորն է:

2. 1956 տարուան Յունվար 1էն մինչեւ Դեկտեմբեր 31 ունեցած ենք հետեւեալ

ծիսակատարութիւնները. 129 մկրտութիւն, որոնցմէ 11 հատը միայն դրոշմուած են, ղ նախապէս մկրտուած ըլլալով ուրիշ եկեղեցիի մը մէջ: 51 պսակադրութիւն, որոնցմէ երկուքը նախապէս քաղաքային ամուսնութիւն կնքած էին: 53 թաղում: Այս թիւերը բաղդատելով անցեալ տարուան հետ 1956 ունեցած ենք 16 մկրտութիւն պակաս, 7 պսակ աւելի եւ 9 թաղում պակաս: Հոս պէտք է աւելցնել որ մկրտութեան թիւին պակասիլը երեւութեան է որովհետեւ անցեալ տարի սովորականէն աւելի քան 40 մկրտութիւն աւելի ունեցած ենք: 1956ին ունեցած ենք նաեւ 16 նշանտուք:

3. Հիւանդաց այցելութիւնը նկատած եմ իմ աւագ պարտականութիւններէս մին, սակայն դժբախտաբար մեր հաւատացեալները չեն վարժուած տակաւին իրենց հովիւին լուր տալ եւ կակնկալ են որ ան պատահամբ տեղէ մը լսած ըլլայ: Կը պատահի որ մինչեւ ինծի լուր հասնիլը կամ հիւանդը արդէն սկսած է իր բնականոն կեանքին եւ կամ մահամերձ է եւ զգայազիրկ ու անկարող Ս. Հաղորդութիւն ստանալու:

4. Տնօրհնէք. 1956 տարուան ընթացքին Ս. Մնունդի առթիւ օրհնած եմ 75 տուն, իսկ Ջատկի առթիւ 179 տուն, ընդհանուր թիւը բերելով 254ի: Այս առթիւ շնորհակալութիւն կը յայտնեմ դարձեալ Պր. Պարսամ Պարսամեանին ինչպէս նաեւ փոքրիկն Մայքըլ Արմուտլեանի, Րիչըրտ Քէլէշեանի եւ Հէրի Աւագեանի որոնք զանազան առիթներով ընկերացան ինծի եւ օգնեցին երգեցողութեանց ընթացքին:

5. Ջահակիր. Ամէն ամիս անխափան հրատարակած ենք եկեղեցւոյս թերթիկը: Այս առթիւ դարձեալ կուզեմ շնորհակալութիւն յայտնել Պր. Ճորճ Քիւրէնեանի որ հինգ տարիներէ ի վեր ազնուօրէն յանձն առած է թերթիս տպագրութեան փէթիթները ձրի շինել: Թերթին անգլերէն բաժնի խմբագրութիւնն ու մեքենագրութիւնը, ինչպէս նաեւ հասցէներու փոփոխութեան կարեւոր գործը երէցկին Մանուշակ Գասպարեանն է որ կը շարունակէ կատարել սիրայօժար կերպով:

6. Անցնող տարուան ընթացքին մասնակցած եմ հետեւեալ համագումարներուն. Հոգեւորականաց Ամառնային Համագումարը ի Պէլմար, Նիւ Ճըրզի Յուլիս 9-14: Լէյպըր Տէյին մասնակցեցայ Հեթհի Համագումարին ի Վաշինկթըն, ՏիՍի: Հոկտ. 11-14 մասնակցեցայ Թեմական Պատգամաւորական Ժողովին եւ զայն կանխող Հոգեւորականաց Ժողովին իբրեւ ատենապետ: Մարտ 16-18 մասնակցեցայ նաեւ Իսթ Լէնսինկի մէջ գումարուող "Կրօնական Դաստիարակութեան Համագումարին" իբրեւ հովիւ եւ դասախօս: Հոս կարելի է յիշել Ս. Պատարագի պատկերազարդ գրքոյկ մը, որ հրատարակեցինք Տէնիս ֓ափազեանի խմբագրութեամբ եւ որ սկսած ենք ցրուել մեր ամբողջ Թեմին մէջ:

Վերջացնելէ առաջ այս զեկոյցը, հաճոյքով կը գնահատեմ եւ կօրհնեմ մեր Եկեղեցւոյ բոլոր կազմակերպութիւնները եւ բոլոր այն անդամները, որոնք իրենց բաժինը բերին եկեղեցւոյ տարեկան հունձքին, ինչպէս նաեւ բոլոր անոնք որոնց բարեկամութիւնը վայելեցի, որոնք օգնեցին ինծի երբեմն իրենց բարի թելադրութիւններով եւ երբեմն իրենց յօժարակամ գործակցութեամբ: Կը մաղթեմ Աստուծոյ օրհնութիւնն ու վարձատրութիւնը բոլորին, իրենց նուիրեալ ծառայութեան համար: Այս առթիւ չեմ կրնար չարտայայտուիլ գոնէ Միական Խորհուրդին մասին որ իր գործը կատարեց լրջութեամբ եւ նուիրումով Պր. Հայկազ Եաղուպեանի կարող ատենապետութեամբ: Այս տարի տօնեցինք Եկեղեցւոյս 25ամեակը, եւ կը գտնուինք նոր շրջանի մը սեմին առջեւ: Ծատ լուրջ վերագնահատութեան պէտք է ենթարկենք մանաւանդ Միական Խորհուրդի դիրքին ու պարտականութեանց մեր հասկացողութիւնը, եւ այդ կարեւոր պաշտօնին թեկնածու պատրաստելու ծրագիր մը պէտք է ունենանք: Երբ կը պատրաստուինք մօտ ատենէն յարմարագոյն շէնքեր կառուցանել մեր կրօնական ու դպրոցական պէտքերուն համար, հիմակուրնէ պէտք է մեր եկեղեցւոյ տնտեսական ու եկամուտի աղբիւրները դնենք ամուր եւ առողջ հիմերու վրայ:

Խոնարհաբար կը խնդրեմ նաեւ ձեր աղօթքը, որպէսզի Աստուած ինծի եւս, իր նուաստ սպասաւորին ու պաշտօնեային, տայ իր շնորհը իմաստութեամբ, նուիրումով եւ քաջութեամբ հովուելու իր այս բանաւոր հօտը ի ծառայութիւն Հայ Ազգին ու Ժողովուրդին եւ ի փառս Քրիստոսի եւ ի պայծառութիւն Հայց. Եկեղեցւոյ:

Մարտ 17, 1957

ԱՌՆԱԿ ԵՐԷՑ
Հոգեւոր Հովիւ